ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 41-Ա

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 94-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> թիվ 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
4. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող սոցիալական ներդրումների տեղական զարգացման ծրագրին մասնակցելու համաձայնություն տալու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հառիճ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 08-063-0048-0019 կադաստրային ծածկագրով 0.26311 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոխությունը հաստատելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող հատուկ տեսակի համակցված թափքով կամազ մակնիշի 599 CC 61 պետհամարանիշով ավտոմեքենան «Շինարար Նարե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշենի գյուղի վարչական տարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության, 08-093-0118-0108 կադաստրային ծածկագրով 11.20061 հեկտար հողամասը <<Ֆիրմա- Կռունկ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը վարձակալության տրամադրելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշենի գյուղի վարչական տարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության, 08-093-0118-0104 կադաստրային ծածկագրով 3.39868 հեկտար հողամասը <<Վասիլ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը վարձակալության տրամադրելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 91-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող Ալիխանյան եղբայրներ փողոց 3 հասցեում գտնվող 1,0 հա մակերեսով հողամասում բժշկական կենտրոն կառուցելու համար համաձայնություն տալու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նիստի օր նշանակելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		

Ասատրյան

Մկրտչյան

Ոսկանյան

Գևորգյան

Աղրամանյան

Բաղդասարյան

Գևորգյան

Հովհաննիսյան

Պետրոսյան

Գևորգյան

Պետրոսյան

Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 42-Ն

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 94-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 94-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) 05.6.1 դասակարգմամբ բաժնի <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններ>> (4511) հոդվածում գրված <<32755000 երեսուն երկու միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար>> թիվը <<55855000 հիսուն հինգ միլիոն ութ հարյուր հիսուն հինգ հազար) թվով և բառերով:
2) Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ բաժնի <<Պահուստային միջոցներ>>(4891)հոդվածում գրված <<315054000 երեք հարյուր տասնհինգ միլիոն հիսունչորս հազար>> թիվը և բառերը փոխարինել <<291954000 երկու հարյուր իննսուն մեկ միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար>> թվով և բառերով:
3) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի 01.6.1 դասակարգմամբ <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> (4239) հոդվածում գրված <<20500000 քսան միլիոն հինգ հարյուր հազար>> թիվը և բառերը փոխարինել <<3100000 երեք միլիոն հարյուր հազար>> թվով և բառերով:
4) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի 01.6.1 դասակարգմամբ <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ >>(4111)հոդվածում գրված <<0 զրո>>թիվը փոխարինել <<17400000 Տասնյոթ միլիոն չորս հարյուր հազար>> թվով և բառերով:
5) Աղբահանում բաժնի 05.1.1 դասակարգմամբ <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> (4239) հոդվածում գրված <<2400000 երկու միլիոն չորս հարյուր հազար>> թիվը և բառերը փոխարինել <<2800000 երկու միլիոն ութ հարյուր հազար>> թվով և բառերով:
6) Աղբահանում բաժնի 05.1.1 դասակարգմամբ <<հատուկ նպատակային նյութեր>> (4269) հոդվածում գրված <<2000000 երկու միլիոն>> թիվը և բառերը փոխարինել <<1600000 մեկ միլիոն վեց հարյուր հազար>> թվով և բառերով:

7) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի 01.6.1 դասակարգմամբ <<նախագծահետազոտական ծախսեր >>(5134)հոդվածում գրված <<0 զրո>>թիվը փոխարինել <<4600000 չորս միլիոն վեց հարյուր հազար>> թվով և բառերով:
8) Ոռոգում բաժնի 04.2.4 դասակարգմամբ <<նախագծահետազոտական ծախսեր>> (5134)հոդվածում գրված <<0 զրո>>թիվը փոխարինել <<3750000 երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար>> թվով և բառերով:
9) Ճանապարհային տրանսպորտ բաժնի 04.5.1 դաակարգմամբ <<նախագծահետազոտական ծախսեր>> (5134) հոդվածում գրված <<24508000 քսանչորս միլիոն հինգ հարյուր ութ հազար>> թիվը փոխարինել <<16158000 տասնվեց միլիոն մեկ հարյուր հիսունութ հազար>> թվով և բառերով:

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 43-Ն

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ն մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի
ապրիլի 08-ի N 43-Ն որոշման

ԿԱՐԳ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման գործընթացը, հաշվառման գրանցամատյանների վարման կարգը, գրանցամատյանների ձևերը:

2. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների աշվառումն իրականացվում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:

3. Գրանցամատյանները դասակարգվում են՝

1) տեղական տուրք վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),

2) տեղական վճար վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),

3) տեղական տուրք վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 3),

4) տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 4):

4. Գրանցամատյանները վարվում են Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համապատասխան ոլորտի բաժիններում՝ բաժինների պետերի պատասխանատվությամբ և Արթիկ համայնքի վարչական բնակավայրերում վարչական ղեկավարի պատասխանատվությամբ

5. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:

6. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների աշվառումը կարող է իրականացվել փաստաթղթային կամ էլեկտրոնային ձևով:

7. Փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:

8. Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝

1) գրանցամատյանի վարման տարեթիվը,

2) տուրքի և (կամ) վճարի տեսակը,

3) գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան բաժնի անվանումը,

4) գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անուն, ազգանունը (ստորագրությունը),

5) տուրք և (կամ) վճար վճարողների գրանցման հերթական համարը,

6) համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տուրք և (կամ) վճար (լրացվում է առկայության դեպքում),

7) տուրքի և (կամ) վճարի չափը,

8) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տուրք և (կամ) վճար,

9) տուրք և (կամ) վճար վճարող ֆիզիկական անձանց դեպքում գրանցամատյաններում (Ձև 1, Ձև 2) ներառվում են նաև՝

ա. Ֆիզիկական անձի անունը, ազգանունը (տվյալ լինելու դեպքում՝ հայրանունը),

բ. հաշվառման հասցեն,

գ. անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

10) տուրք և (կամ) վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում գրանցամատյաններում (Ձև 3, Ձև 4) ներառվում են նաև՝

ա. իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,

բ. գրանցման հասցեն,

գ. գործունեության հասցեն,

դ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը,

ե. հարկ վճարողի հաշվառման համարը.

9. Համապատասխան բաժիններում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարված գրանցամատյանները ստորագրվում են բաժնի պետի և վարչական ղեկավարների կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմի արխիվ:

10. Գրանցամատյաններ կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ), որտեղ գանձվում է տուրք և (կամ) վճար.

11. ՀՈԱԿ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները ստորագրվում են տնօրենի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:

12. Գրանցամատյանների Ձև 1-ը, Ձև 2-ը, Ձև 3-ը և Ձև 4-ը կցվում են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 44-Ա

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 10-Ա որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. անասնաբույժ՝ հաստիքային միավոր <<2>> թիվը փոխարինել անասնաբույժ՝ հաստիքային միավոր <<2.5>> թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		

Գևորգյան

Աղրամանյան

Բաղդասարյան

Գևորգյան

Հովհաննիսյան

Պետրոսյան

Գևորգյան

Պետրոսյան

Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 45-Ն

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնություն տալ Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումների Տեղական Զարգացման ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով.

1) Կոմունալ ծառայությունների իրականացում

2. Առաջարկի հաստատման դեպքում կատարել 5% ներդրում՝ ՍՆՏԶ ԼՖ Ծրագրի պահանջներին համապատասխան;

3. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում;

4. Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ՝ Ծրագրին մասնակցելու վերաբերյալ;

5. Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		

Վարդանյան

Ասատրյան

Մկրտչյան

Ոսկանյան

Գևորգյան

Աղրամանյան

Բաղդասարյան

Գևորգյան

Հովհաննիսյան

Պետրոսյան

Գևորգյան

Պետրոսյան

Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 46-Ա

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով՝ համայնքի անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, անչափահասների, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի հունիսի 2-ի 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 11-րդ և 12-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի ներկայացմամբ ստեղծել համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական հետևյալ կազմը.

1) Արա Սուքիասյան–Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
2) Արկադի Թադևոսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ,
3) Հերմինե Սահակյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ – սոցիալական աշխատող
4) Հովհաննես Սահակյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ավագանու անդամ
5) Տաթևիկ Աղաքարյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ – իրավաբան
6) Մարինե Թադևոսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության բաժնի պետ

7) Աստղիկ Կարախանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբան:
8) Ալա Ասոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
9) Լուսինե Կուրղինյան-Ոստիկանության Արթիկի բաժնի անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահ նշանակել Արա Սուքիասյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

Կողմ (18)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (1)**
Հարությունյան		Մկրտչյան
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 47-Ա

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՌԻՃ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-063-0048-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.26311 ՀԵԿՏԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու» կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի մարտի 10-ի N 25 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հառիճ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հառիճ գյուղի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող /վկայական N 15012018-08-0036, հասցե՝ գյուղ Հառիճ 15-րդ փողոց, թիվ 14 հողամաս/ 08-063-0048-0019 կադաստրային ծածկագրով 0.26311 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում քաղաքացի Արսեն Շիլլերի Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու և հողամասի

նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան թույլատրած հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյանին.

1) Հողամասի նպատակային նշանակության սույն որոշման 1-ին կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 48-Ա

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՏՈՒԿ ՏԵՍԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԹԱՓՔՈՎ ԿԱՄԱԶ ՄԱԿՆԻՇԻ 599 CC 61 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԵՐՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ «ՇԻՆԱՐԱՐ ՆԱՐԵ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համանքի սեփականություն հանդիսացող հատուկ տեսակի համակցված թափքով կամազ մակնիշի 599 cc 61 պետհամարանիշերով ավտոմեքենան վարձակալության իրավունքով տրամադրել «Շինարար Նարե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:
2. Սահմանել, որ «Շինարար Նարե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից սույն որոշմամբ վարձակալության հանձնված մեքենան կարող է օգտագործվել միայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համանքի կարիքների համար մատուցվող ծառայությունների իրականացման նպատակով:
3. Մեքենայի վարձակալական վճար սահմանել՝ 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Մինչև օրենքով սահմանված կարքով մեքենայի վարձակալության իրավունքի գրանցումը մեքենան հանձնել «Շինարար Նարե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տիրապետմանը:

Ավագանու անդամներ

Կողմ (19) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Հարությունյան
Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Հաջաթյան
Մինասյան

Վարդանյան
Ասատրյան
Մկրտչյան
Ոսկանյան
Գևորգյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 49-Ա

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՄԶԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 08-093-0118-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 11.20061 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ <<ՖԻՐՄԱ - ԿՌՈՒՆԿ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից <<Ֆիրմա-Կռունկ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 2012 թվականի հոկտեմբերի 20-ի ՇԱԹՎ-29 /066 թույլտվությունը և N ԼՎ-066 լեռնհատկացման ակտը /փոփոխությունը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 17-ի թիվ 502-Ա հրամանով/, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի ապրիլիի 02-ի թիվ 68 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-093-0118-0108 կադաստրային ծածկագրով **11.20061** հեկտար հողամասը տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով հատկացնել մինչև Հայաստանի Հանրապետության Էներգետիկքյի և բնական պաշարների նախարարի կողմից տրված

օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ավարտը, 354835 /երեք հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր երեսունհինգ/ Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով, 50 տարի ժամկետով մինչև 25 դեկտեմբերի 2046 թվականը, վարձակալության տրամադրել <<Ֆիրմա-Կռունկ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:
3. Հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:
4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

Կողմ (18)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (1)**
Հարությունյան		Հաջաթյան
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 50-Ա

Արթիկ համայնք 8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՄԶԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 08-093-0118-0104 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 3.39868 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ <<ՎԱՍԻԼ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից <<Վասիլ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 2021 թվականի ապրիլի 30-ի ՇԱԹ-29/649 թույլտվությունը և N Լ-649 լեռնհատկացման ակտը /հատկացումը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի ապրիլի 30-ի թիվ 654-Ա հրամանով /, Հայստանի Հանրապետության վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 231 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-093-0118-0104 կադաստրային ծածկագրով 3.39868 հեկտար հողամասը տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով հատկացնել մինչև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ն նախարարի

կողմից տրված օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ավարտը, 107670 /մեկ հարյուր յոթ հազար վեց հարյուր յոթանասուն/ Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով, 50 տարի ժամկետով մինչև 30 ապրիլի 2071թվականը, վարձակալության տրամադրել <<Վասիլ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:
3. Հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:
4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

Կողմ (18)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (1)**
Հարությունյան		Հաջաթյան
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 51-Ա

Արթիկ համայնք

8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ) ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 94-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի 22-Ն որոշման 2-րդ հավելվածի դրույթները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ բաժնի /այլ դասերին չպատկանող/ բաժնում նախատեսված գումարից կատարել հատկացում Արթիկ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին՝ 410000 (չորս հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի
ապրիլի 8-ի թիվ 51-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

h/h	Ազգանուն,Անուն,Հայրանուն	Գումարը /դրամ/
1.	Պետրոսյան Այծեմնիկ Հմայակի	15 000
2.	Զատիկյան Սիրանուշ Լենդրուշի	15 000
3.	Աղաքարյան Սիրվարդ Գրիգորի	15 000
4.	Յարալյան Ալիսա Լավրենտի	20 000
5.	Բաղդասարյան Հերմինե Սասունիկի	40 000
6.	Մինասյան Քնարիկ Աշոտի	50 000
7.	Վարդանյան Սիաննա Արարատի	55 000
8.	Աբրահամյան Զարզանդ Տարիելի	100 000
9.	Սոնայան Սմբատ Սամվելի	100 000
	Ընդամենը	**410000**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 52-Ա

Արթիկ համայնք

8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 91-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 91-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) <<Արթիկի քաղաքային տնտեսության սպասարկում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) <<Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում՝ Մշակույթի տան պատասխանատու <<18.5>> թիվը և բառերը փոխարինել <<19>> թվով և բառերով և փակագծում գրված <<37 աշխատող>> թիվը և բառերը փոխարինել <<38 աշխատող>> թվով և բառերով:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

Կողմ (19) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Հարությունյան
Տոնոյան

Վարդանյան
Սահակյան
Հաջաթյան
Մինասյան
Վարդանյան
Ասատրյան
Մկրտչյան
Ոսկանյան
Գևորգյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

Հավելված
Հայաստանի Հանարապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 8-ի N 52-Ա որոշման

<<ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(50 աշխատող)

Հ/Հ	Հաստիք	Դրույք	Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/	Աշխատավարձի չափը
1	Տնօրեն	1	220000	220000
2	Փոխտնօրեն	1	210000	210000
3	Հաշվապահ	1	100000	100000
4	Վարորդ	1	150000	150000
5	Բանվոր՝ կանաչապատման և բարեկարգման գծով	4	130000	4x130000
6	Աշխղեկ	1	150000	150000
7	Էլեկտրիկ	1	150000	150000
8	Հավաքարար	21	89103	21x89103
9	Ջրագծի բանվոր	12.75	89103	12.75x89103

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 53-Ա

Արթիկ համայնք 08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն /համաձայն հավելվածի/:

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 54-Ա

Արթիկ համայնք 08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԼԻԽԱՆՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1,0ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախատեսվել է Արթիկ համայնքի Արթիկ քաղաքում իրականացնել բժշկական կենտրոնի կառուցում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի սեփականությունը հանդիսացող Ալիխանյան Եղբայրներ փողոց 3 հասցեում գտնվող 08-002-0068-0008 կադաստրային ծածկագրով, 1,0հա մակերեսով հողամասում բժշկական կենտրոնի կառուցման համար:

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 55-Ա

Արթիկ համայնք

8 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նիստի օր նշանակել 2022 թվականի մայիսի 11-ին ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Վարդանյան		
Ասատրյան		
Մկրտչյան		
Ոսկանյան		
Գևորգյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Չարչյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
08 ապրիլի 2022 թվական